

A
U

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ
ԵՎ ԵՐԵՎԱԿՈՒՄՆԵՐԻ

ՄԵՏԱԴԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ

ՍԽԹ. N 113

Օր. N —

Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

N 52
«ՀԵՖ» ՊՈԱԿ

հանրապետության անվանումը Ամուլսարի հանրապետություն

տարածված հանածո (ները) Ոսկեքեր քվարցիտներ

հայտնաբերական յուրացման աստիճանը շահագործում


ազմեց Հ.Կարապետյան / Երկրաբան Ստորագրություն 88 09. 2011 թ.
անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոնը

ստորագրեց Հ.Կարապետյան գլխ. տնօրեն Ստորագրություն 05 10. 2011 թ.
անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոնը


ստորագրեց Հ.Կարապետյան գլխ. տնօրեն Ստորագրություն 05 10. 2011 թ.
անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոնը

Ստորագրողի անունը	Անուն, ազգանուն, հայրանուն	Պաշտոնը	Ստորագրություն	Ամսաթիվը
«Հանրապետական կրթության նախարարության կողմից»	Հովսեփյան Գ.Ս.	Տնօրեն		20.03.2013թ









Նկ. 1. Անուշարի հանքավայրի խախտումների տեղայնացումը:






Նկ. 2 Տիգրանես և Արտավազդես տեղամասերի հիմնական տեկտոնական խախտումների ուղղությունները:


-  Porphyry Andesite
-  Silica
-  Mineralized Structures

Erato section 3






-  Porphyry Andesite
-  Silica
-  Mineralized Structures


Tigranes section 20



Նկ. 4. Ամուլսարի ոսկու հանքավայր: Էրատո և Տիգանես տեղամասերի ամփոփ համակարգչային լուկ-կտրվածքներ:

-  Porphyry Andesite
-  Silica
-  Mineralized Structures

Artavasdes section 6



Նկ. 3. Ամուլսարի ոսկու հանքավայր: Արտավազդես տեղամասի ամփոփ համակարգչային մոդել-կտրվածքներ:

001. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ինքնա	Անձնագրի համարը	Փաստաթղթի շիճրը	Կազմելու տարին	Փաստաթղթի պահպանման վայրը
01	02	03	04	05
A			2013	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ

002. ՕՐԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր/Տիգրանես-Արտավազդես տեղամասեր/

003 ՄԵՏԱՂԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Հանքային շրջանը	Հանքային դաշտը (հանքավայրերի խումբը)
01	03
Վայոց Ձորի և Սյունիքի	Ամուլսարի

004 ՀԵՏԱԽՈՒԶՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Նախարարությունը	Ընկերությունը, կոմբինատը (փորձարկումները)
01	02
	«ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ

005 ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարզը	Ենթաշրջանը	Համայնքը
01	02	03
Վայոց Ձոր և Սյունիք		

006. ԹԵՐԹԻ ԱՆՎԱՆԱ-ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ
1 : 200 000

J-38-IV

007. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ

Հյուսիսային լայնություն		Արևելյան երկայնություն		Արևմտյան երկայնություն	
Ատոմական	Բույժ	Ատոմական	Բույժ	Ատոմական	Բույժ
01	02	03	04	05	06
39	47	39	40		

008. ԲԱՑԱՐՉԱԿ
ՆԻՇԸ, մ
նվազագույն / առավելագույն

2500/ 2988

009. ՕՐՅԵԿՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

(ուղղությունը և հեռավորությունը մոտակա ե/գ կայարանից, բնակավայրերից, նմանատիպ օբյեկտներից, հաղորդակցման ուղիները, տնտեսական յուրացումը և այլն)

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը գտնվում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս-հյուսիս-արևմտյան ճյուղավորումների ջրբաժան մասում: Հանքավայրի շրջանը տեղադրված՝ Սյունիքի մարզի Գորհայք գյուղից 12կմ հյուսիս-արևմուտք, Վայքի Կեչուտ գյուղից 10կմ հարավ: Շրջանը տնտեսապես զարգացած, ապահովված է էլեկտրաէներգիայով: Շրջանը հարուստ է շինանյութերի և մետաղային հանքավայրերով:

010. ԲԱՑՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ 2006թ.

011. ՏՎՅԱԼՆԵՐ ՕՐՅԵԿՏԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը հայտնաբերվել է (ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունը և այլն)
«Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից և կատարվել են համալիր երկրաբանական և

բոլորողագնահատողական աշխատանքներ:

012. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(տեսակը, մեթոդը, մասշտաբը, օբյեկտի դաշտում անցկացման տարին)

1930թ. 1:210000 երկրաբանակա

հանույթ /Վ.Ն.Կոտլյար/, 1947թ. 1:50000 մասշտաբի հանույթ /ժ.Մ.Գրիգորյան/,

2007-2010թ.թ «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից կատարվել է 1.2000 մասշտաբի տեղանքի քարտեզագրական աշխատանքներ

013. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԱՆՐԱԶՆԻՆ ՈՐՈՆՈՒՄ

(տեսակը, մեթոդը, մասշտաբը, օբյեկտի դաշտում անցկացման տարիները)

2006-2008թ.թ «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից կատարվել

մանրամասն երկրաբանահետախուզական աշխատանքներ:

017. **ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ** (կառուցվածքի անվանումը, տեսակը) Ամուլսարի հանքավայրի
շրջանը գրավում է լայնահուն փոքրաթեք օվալաձև ափսեանման սինկլինալի տաշտակային մասը: Ամուլսարի սինկլինալը գտնվում է Արփա /արևմուտքում/, Որոտան /արևելքում/, և Դարբ /հարավում/ գետերի միջակայքում և բոլոր կողմերից սահմանազատվում է խոշոր տեկտոնական խախտումներով: Տաշտակի եզրագծով մերկանում են ինտրուզիվ գոյացությունների շղթայաձև մանր ելքեր, որոնք հիմնականում պատռում են միջին էոցենի առաջացումները: Լայնորեն տարածված են մետասոմատիկ առաջացումները, բնորոշ են երկրորդային քվարցիտների տարբեր ֆազիաները /միաքվարցիտներ, ալունիտներ, սերիցիտներ և այլն/:

018. **ՊԱՐՓԱԿՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ** (կառուցվածքի անվանումը, տեսակը) Սինկլինալը հարավից այն առանձնանում է Ագարակաձորի խզումով
արևմուտքու սինկլինալը արտահայտված է Կեչուտի հյուսիս-արևելյան ուղղվածության խզվածքով, իսկ հյուսիսում սինկլինալը սահմանազատվում է Զիրակի լայնակի խզումով: Արևելքում Ամուլսարի սինկլինալը սահմանազատվում է Որոտանի երիտասարդ կիրճով:

019. **ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ՀԱՍԱԿՆ ՈՒ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ** Ըստ Ա.Ա.Գաբրիելյանի շերտախմբի հասակը
դասվում է ստորին-միջին օլիգոցենին, քանի որ շերտախումբը տեղադրված է ֆաունայով հիմնավորված միջին էոցենի նստվածքների վրա և Որոտանի ավազանում ծածկվում է միոպլիոցենի հրաբխա-նստվածքային առաջացումներով: Ամուլսարի ոսկեբեր տարածքը տեղադրված է երրորդական հասակի հրաբխա-նստվածքային շերտախմբում, որը մտնում է էոցեն-օլիգոցեն կրա-ալկալային հրաբխա-ալուտոնիկ կազմի մեջ: Ներկայացված է անսեզիտայինից մինչև դացիտային կազմի հրաբխաբեկորային առաջացումներով:

020. **ՊԱՐՓԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐԸ** Մոնոքվարցիտ, օքսիդացված և քվարցացած տուֆեր, քվարց-ալունիտային բեկորային ապարներ, փոփոխված, քվարցացած դացիտներ:

021. **ՊԱՐՓԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԵՐՉՀԱՆՔԱՔԱՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Հանքատարածքի կենտրոնական մասում
ապարների փոփոխվածության աստիճանը թույլ չի տալիս որոշել առաջնային հրաբխային կառուցվածքը և միներալոգիական կազմը: Այն մասերում, ուր փոփոխվածությունները չեն վերացրել առաջնային կառուցվածքը, դիտվում է անդեզիտային զմբեթային ապարների համասեռ կառուցվածք, որում գերակշռում են պլագիոկլազի մի քանի մմ չափի տարակողմնորոշված ներփակումներ, ինչպես նաև ավզիտի էլ ավելի փոքր ներփակումներ, դաշտային սպաթների մանրահատիկ հիմնական զանգվածում:

022. **ԱՅԼ ՏԿՅԱԼՆԵՐ ՊԱՐՓԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ** Մոնոքվարցիտը մանրահատիկ, քվարցացած, չափավոր ծակոտկեն
ապար է, որում գերակշռում է մանրահատիկ քվարցը՝ 90-95%, գյուտիտը և լիմոնիտը 5-10% երակներում կամ հարածուկներում: Օքսիդացված և քվարցացած տուֆերը կազմված են քվարցի խոշոր և մանր բեկորներից /90-98%/ ներկայացված մանրահատիկ քվարցով և ռուտիլով: Դատարկությունները փուչ են և եզրագծված են էվդեդրալ քվարցով գյուտիտի և լիմոնիտի երկաթային փառով /2-10/: Քվարց-ալունիտային բեկորային ապարները կազմված են մանրաբյուրեղային քվարցի հիմնական զանգվածից /60%/ և քիչ քանակով կալից, որոնցում առկա մանրահատիկ ալունիտը՝ շուրջ 25%, իսկ գյուտիտն ու լիմոնիտը կազմում են 15%: Փոփոխված, քվարցացած դացիտներ հանդես են գալիս մանրահատիկ քվարցը և ռուտիլի աագրեգատները, ավելի քիչ հանդիպում են ամորֆ երկաթի ցրված հիդրօքսիդները, որոնք ցրված են քվարցացված զանգվածում:

023. **ՕԲՅԵԿՏԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ** Ամուլսարը կազմված է մի
քանի երկայնաձիգ քվարցացման գոտիներից, որոնցից առանձնացվում են հանքայնացման 3 կենտրոններ՝ Տիգրանես, Արտավազես և Էրատո:

024. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

hh	Հանքամարմինների անվանումը (նշանակությունը)	Քանակը	Մարմնի ձևը	Տարածման ուղղությունը		Տարած. գերիշխող ուղղ.
				առավել.	նվազ.	
	01	02	03	04	05	06
1	Սակերեսային հանքային մարմին	1	Իզոմետրիկ օվալաձև.	C	3	C3
2						
3						
4						
5						
6						
7						
8						

hh	Տեղադրման բնույթը	Չափերը ըստ տարածման, մ		Չափերը ըստ անկման, մ		Դեզորությունը, մ		Առատության տեղադրման խորությունը առավել / նվազագ.	Հանքաքարի հաշվեկշիռ. պաշար., %
		առավելագույն / նվազագույն	միջինը	առավելագ. / նվազագ.	միջինը	առավելագ. / նվազագ.	միջինը		
1	Փոքրաքեթ	/	/	/	/	/	/	100 / 150	100
2		/	/	/	/	/	/	/	/
3		/	/	/	/	/	/	/	/
4		/	/	/	/	/	/	/	/
5		/	/	/	/	/	/	/	/
6		/	/	/	/	/	/	/	/
7		/	/	/	/	/	/	/	/
8		/	/	/	/	/	/	/	/

025. ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԵՐՉՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Գազաքային մասում հրաքիսաքարերը

ներկայացված են մինչև հանքային անդեզիտներով: Բարձրադիր մասերում, գրեթե ամենուր ապարները փոփոխված են մինչև համասեռ քվարցիտի /մոնոքվարցիտ/:

026. ՈՉ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ Ջանգվածի ցածրադիր մասերում, ապարների փոփոխվածության արդյունքում նկատվում են պտավոր քվարցիտից մինչև քվարց-ալունիտային և կավային ֆացիաներ:

027. ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՄԻՆԵՐՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Գլխավոր հանքաքարային միներալները	
Քվարց	01
Երկրորդական հանքաքարային միներալները	
հեմատիտ, գյոտիտ, կալիումական դաշտային սպաթ, ռուտիլ, լիմոնիտ	02
Հազվագյուտ հանքաքարային միներալները	
	03
Գլխավոր ոչ հանքաքարային միներալները	
	04
Երկրորդական ոչ հանքաքարային միներալները	
	05

028. ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐԸ

Օգտակար հանածոն	Միներալները		
	I	II	III
01	02	03	04
ոսկի	քվարց		

029. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ Քվարցը միկրոբյուրեղային կամ խալցեդոնատիպ է:
Քվարցի մանր

Քվարցի մանր, նուրբ, կարծ ու ընդհատվող մանրաերկաները և ըստ էկվիդրալ հարաճումներն ուղեկցում են ապարների ատարկությունները: Քվարցի քանակն ապարներում հնարավոր չէ որոշել, սակայն ակնհայտ է որ քվարցացումը համատարժ է:

Գյուտիտ և լիմոնիտ - այս երակները դիտվում են երակներում, ճեղքերում և դատարկություններում, ցեմենտաց-
ցնելով տարբեր ապարների բեկորներ:

Լիմոնիտը գյուտիտից տարբերվում է ջրային բաղադրիչի ավելի բարձր պարունակությամբ:

Գյուտիտի և լիմոնիտի հիդրոքսիդները պարունակում են 0.4-1% SO_3 : Դ
աճախ գյուտիտը տեղակայվում է լիմոնիտով:

Ալունիտ - այս միներալը հանդիպում է գյուտիտի, քվարցի մանրահատիկ հարաճում- ների մեջ: Ալունիտը մասամբ
տեղակայում է պարփակող կավերը և տեղակայվում է քվարցով:

Ալունիտի խոշոր հարաճումները պարունակում են ներփակող ապարնե-
րի քվարցացած բեկորներ:

Ռուտիլ - մանրա-միջահատիկ ռուտիլը հանդիպում է ինչպես ցրված, այնպես էլ կուտակումների տեսքով:
Երբեմն ռուտիլը գորշ գույնի է, բժավոր և քայքայված տեսքով՝ նմանվելով բեկորային հատիկների: Դատելով
կազմից, նրանք ունենում են օջախը, քանզի հաճախ պարունակում են Nb, Ta, Z: Ռուտիլի ագրեգատների միջև
նկատվում են գյուտիտի և լիմոնիտի անջատումներ:

042. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱԿԱՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՏԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԵՋ

043. ՀԱՆՔԱՔԱՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (տեխնոլոգիական փորձարկումները և դրանց արդյունքները) Երկրաբանահետախուզական

աշխատաքնների ընթացքում վերցվել է շուրջ 44000 նմուշներ, որոնք ենթարկվել են հարգորոշիչ և ատոմաբսորբցիոն անալիզների: Տեխնոլոգիական փորձարկումների արդյունքները զույգ են տվել, որ նման աղբատ ոսկու պարունակությամբ հանքաքարից օգտակար տարրի կորզման լավագույն տարրերակը կույտային տարրալվացման մեթոդն է: «Գեոթիմ» ՓԲԸ-ի պատվերով տեխնոլոգիական փորձարկումներ են կատարվել կանադական SGS Lakefield Research Limited ընկերության կողմից Ամուլսարի տեղամասի մեկ միացյալ (կոմպոզիտ) օքսիդացած հանքաքարի նմուշի վրա՝ 25կգ քաշով: Միացյալ տեխնոլոգիական նմուշը կազմվել է հորատհանուկների կիսած նմուշներից: Սույն ուսումնասիրության նպատակն է պարզել հանքաքարի մետալուրգիական վերամշակման հնարավորությունները:

Անգլիական WAL (Wardell Armstrong International) ընկերությունը իրականացրել է ուսումնասիրություններ 2՝ 120 և 330կգ քաշերով խոշոր լաբորատոր փորձարկումների վրա: Պարզվել է, որ նմուշների միներալոգիական կազմը համընկնում է կանադական SGS ընկերության կողմից ուսումնասիրված նմուշների հետ:

Մետալուրգիական փորձարկումների պլանը ներառում է միացյալ նմուշի միներալոգիական հատկանիշների որակական գնահատումը, գնդային աղացի վրա փոշիացման գործակցի որոշումը, գրավիտացիոն պոչերի և քարաբեկորային նյութի ցիանային տարրալվացման, ինչպես նաև ցիանակույտային տարրալվացման հնարավորությունները:

Ոսկու պարունակությունը մանրացված կրկնանմուշների մեջ կազմում է 1.07գ/տ: Գնդային աղացում փոշիացման գործակցը 7.2կվտ/տ:

Հաստատված է, որ Ամուլսարի հանքավայրը ենթակա է կույտային տարրալուծման:

Ոսկու կորզումը տատանվում է 96-97% սահմաններում, մնացուկներում ոսկու պարունակությունը հասնում է 0.03-0.06գ/տ: Ռեագենտների ծախսը քիչ է՝ 0.4կգ/տ NaCN //կայուն կոնցենտրացիան 0.25գ/լ է և 0.3կգ/տ կիր:

044. ԿՈՆԴԻՑԻԱՅԻ ԳԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Ամուլսարի հանքավայրի հաշվեկշռային պաշարների եզրագծման համար օգտագործվել են կոնդիցիաների հետևյալ պարամետրերը.

1. ոսկու եզրագծային պարունակությունը հանքաքարում - 0.15գ/տ

2. պաշարների հաշվարկում ընդգրկվող օգտակար հանածոյի միջակայքերի նվազագույն թույլատրելի և ոչ կոնդիցիոն հանքաքարի ու դատարկ ապարների միջակայքերի առավելագույն թույլատրելի գծային չափերը կազմում են 5մ

3. մակաբացման միջին գործակիցը՝ 1.125մ³/տ:

045. ՄՇԱԿՄԱՆ ԳԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(մշակման եղանակը, կորուստները, աղքատացումը, մշակման առավելագույն խորությունը)

Ամուլսարի հանքավայրը շահագործվելու է բացահանքով, 10 մ բարձրությամբ

հորիզոնական հանքաստիճաններով: հանքաքարի աղքատացումը կազմի 5%, հանքաքարի շահագործական կորուստները կկազմեն 5%:

Մշակման առավելագույն խորությունը 350մ:

41/5

046. ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Մակաբացման ապարների ծավալը կազմել է 40244.8 հազ.մ³

Մակաբացման միջին գործակիցը՝ 1.125:

047. ՄՇԱԿՄԱՆ ԼԵՌՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մակաբացման ապարների ծավալը կազմել է 40244.8 հազ.մ

048. ՄՇԱԿՄԱՆ ՀԻՂՐՈՒԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հանքավայրի սահմաններում ըստ հիդրոերկրաբանական

պայմանների առանձնացնում են նապարների հետևյալ համալիրները

1. չորրորդական նստվածքների համալիր: ներկայացված է էյուվիալ, դեյուվիալ, պրոյուվիալ և ալյուվիալ նստվածքներով և դասվում է առավել թույլ ջրակալված ապարների շարքին / $Q=0.01-0.1$ լ/վրկ/: Քիմիկան կազմով գերակշռում են հիդրոկարբոնատ-կալցիումային տիպի քաղցրահամ ջրերը՝ 0.38 գ/լ միջին միներալիզացիայով և 4.5 գ/էկվ կոշտությամբ;

2. վերին միոցեն-ստորին պլիոցենի հրաբխաբեկորային /պիրոկլաստիկ/ գոյացումների համալիր, որը բնորոշվում է բարձր ծակոտկենությամբ և ճեղքայնությամբ, որի հետևանքով մթնոլորտային տեղումները ներծծվում են ավելի խորը հորիզոնները: Ըստ քիմիկական կազմի ջրերը հիդրոկարբոնատ-կալցիումային են և փափուկ:

3. էոցեն-օլիգոցենի հրաբխաբեկորային նստվածքների համալիր /միջին և թթու կազմի/: Ներկայացված է փոփոխված և քվարցացած անդեզիտներով, դագիտներով, ռիոլիտներով, տուֆերով և տուֆափշրաքարերով, դիորիտներով, սիենիտներով, կոնգլոմերատներով:

Այս ենթահամալիրի գոյացումները ձևավորում են տեղանքի կտրտված ռելիեֆը, որը նպաստում է մակերևութային հոսքի գերակշռմանը ստորգետնյա հոսքի նկատմամբ: Ջրահագեցված հորիզոնները համատարած չեն, ուսպնյակաձև են, իսկ հազվադեպ աղբյուրները սակավաջուր են: Ջրերը հիդրոկարբոնատ-քլորիտ-կալցիումային են: Ստորգետնյա հոսքի մոդուլը $M < 0.5$ լ/վրկ/կմ²

4. Ինտրուզիվ ապարների համալիր: ներկայացված է հիմքային, միջին և թթվային ապարների տարատեսակներով: Համալիրը թույլ ջրատար է ($Q=0.01-0.1$ լ/վրկ), իսկ ջրերը պատկանում են հիդրոկարբոնատ-քլորիտ-կալցիումային տիպին:

Այսպիսով, հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններն ունեն ինքնուրույն ռեժիմ և տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են հետագա շահագործման համար: Հանքավայրի տարածքում ջրակալված ուսպնյակները ընդհատվող են և ունեն տեղային բնույթ, որը վկայում է, որ տեղամասում բացակայում է միասնական ջրատար հորիզոնը:

053. ՕԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՆԵՐԸ

Փաստաթուղթը	Փաստաթղթի բովանդակությունը	Հեղինակը (կատարողը)	Որոշում N (տրված ամսաթիվ)	Հաստատման տարեթիվը	Փաստաթղթի պահպանման համարը
01	02	03	04	05	06
Հաշվետվություն	Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրում 2006-2008թ.թ. կատարված համալիր երկրաբանական ուսումնասիրություններ պաշարների հաշվարկմամբ	Հայկ Ալոյան			6595
Որոշում	ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀԴԳ	N 221 (N 355)	23.02. 2009թ	
Հաշվետվություն	Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրում 2007-2010թ.թ. կատարված երկրաբանական ուսումնասիրություններ պաշարների հաշվարկմամբ	Հայկ Ալոյան			6739
Որոշում	ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀԴԳ	N 309 (N 452)	16.09. 2011թ	